ՄԱՐԴԵՐԻ ՑԵՂԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*
(մ. թ. ա. V—մ. թ. I դդ.)

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայ ժողովրդի կազմավորման ավարտման շրջանում. Երվանդունիների, Արտաշեսյանների ժամանակ և հետագա դարերում հին Հայաստանում ձևավորվեցին առանձին տոհմեր, որոնք Արշակունյաց Հայաստանի ֆեոդալական տների՝ նախարարությունների հիմքը դարձան։

Մ. թ. ա. VI—III դդ. Հայաստանը աչքի էր ընկնում ցեղային կազմավորումների բազմազանությամբ։ Հետագայում առանձին ցեղեր հեռացան պատմական ասպարեզից, սակայն նրանց անունները պահպանվեցին աշխարհագրական անուններում՝ Այրարատ (ալարոդներ-ուրարտացիներ), Սպեր, (սասպեյրներ), Տայք (տաոիներ), Բասեան (փասիաններ)[1] և այլն։ Ի տարբերություն նշված էթնիկական խմբերի, մարդերը, իսկ ապա նաև նրանց հայացած հետնորդները, ոչ միայն իրենց էթնոնիմները թողեցին աշխարհագրական անուններում, այլ նաև ակտիվորեն մասնակցեցին երկրի սոցիալ-քաղաքական կյանքին։ Մարդերը[2] առաջին անգամ հիշատակվում են Վիդևդատում (մ. թ. ա. VII—VI դդ. շեմին) ի թիվս մյուս քոչվորների, որոնք անվանվում էին տուրա, դահեր և դերբիկներ։ Նրանք, որպես «դևերին պաշտողներ», համարվում էին Ավեստայի հասարակության ուղղափավատ դրադաշտականների թշնամիներ[3]։ Հավանաբար մարդերը Մեդիայի թշնամիներն էին, քանի որ Աստիագեսի դեմ Կյուրոս II-ի կողմից կազմակերպված պարսկական ցեղերի ապստամբության մասին խոսելիս Հերոդոտը, բազմաթիվ ցեղեր թվարկելով, հիշատակում է նաև մարդերին[4]։

Հերոդոտը հիշատակում է Հիրոյադես (Ἱροιάδης) անունով մի մարդի[5], որը մասնակցել է Կյուրոս II-ի կողմից մ. թ. ա. 546 թ. Սարդեսի գրավմանը։ Այդ մեկ հիմք է տալիս ենթադրելու, որ մարդերից ուրիշներն էլ են մասնակցել պատերազմին։

Անտիկ աղբյուրները մ. թ. ա. V դարի առաջին քառորդում հիշատակում են պարսկական Մարդոնիոս զորավարին՝ Գոբրիոսի որդուն, Դարեհ I-ի փեսային, որը մասնակցել էր Հունաստանի դեմ Քսերքսեսի արշավանքին։ Մ. թ.

---

* Զեկուցում՝ կարդացված «Վաղ դասակարգային հասարակության առաջացումը» կոնֆերանսում (Մոսկվա, 1973 թ. դեկտեմբեր)։

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 394։

[2] W. Geiger-ի ենթադրությամբ «մարդ» ցեղանունը համեմատվում է իրանական marəϑa-ի հետ, որը նշանակում է «մարդասպան» (Ostiranische Kultur im Altertum. Erlangen, 1882, էջ 203, տե՛ս Н. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 417, ծան. 3)։

[3] М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961, էջ 62։

[4] Herodotus, The Histories, Cambridge, Mass.—London, 1946—1960, I, 125.

[5] Նույն տեղում, I, 84։

ա. 479 թ. նա զոհվում է Պլատեայի ճակատամարտում[6]։ Մարդ ցեղանվան հետ արտաքին նմանություն ունեն նաև Արիոմարդոս և Մարդոնտես անունները։ Առաջինը Դարեհ I-ի և Կյուրոսի որդի Սմերդիսի դուստր Պարմիսի[7] որդին էր՝ մոսխերի և տիբարենների առաջնորդը, իսկ երկրորդը՝ Պարսկական ծոցի կղզիների ցեղերի առաջնորդն էր[8]։

Մարդերի մասին հաջորդ հիշատակությունը, որքանով մեզ հայտնի է, վերաբերում է մ. թ. ա. V դարի վերջին։ Քսենոփոնը, նկարագրելով հունական զորքի նահանջը Հայաստանի վրայով, հիշատակում է „Ἀρμένιοι καὶ Μαρδοὶ καὶ Χαλδαῖοι“[9], որոնք կանգնեցին հույների դիմաց, Կենտրիտես գետի ափին։

Հայկական սատրապության ռազմական կազմակերպության բնույթը տրված է Գ. Ա. Տիրացյանի հոդվածում[10] և այստեղ անհրաժեշտ է նշել միայն Քսենոփոնի նույն հաղորդումից Մարկվարտի արած այն ենթադրությունը, թե խալդայներից բացի մարդերը նույնպես վարձկաններ էին Օրոնտաս սատրապի զորքում[11]։

Մարդերի հայտնվելը Հայկական լեռնաշխարհում կարելի է ենթադրել Դարեհ I-ի ժամանակաշրջանից, երբ Հայաստանը, որպես սատրապություն, մտավ Աքեմենյանների հսկայածավալ պետության կազմը։ Նշված սակավաթիվ տվյալներից ելնելով կարելի է ենթադրել, որ մարդերը պարսկական բանակի ակտիվ տարրն էին և, ըստ երևույթին, դտնվում էին Հայաստանում դեռևս 521 թ., երբ այստեղ բռնկված ապստամբությունը միայն հինգ ճակատամարտերից հետո ճնշվեց[12]։

Կարելի է նկատել, որ մ. թ. ա. VII—V դդ. մարդերը հիշատակվում են Իրանական սարահարթը բնակեցնող ցեղերի մեջ և այդ տարածքից դուրս նրանք հիմնականում հանդիպում են ռազմական արշավանքների ժամանակ, կամ դրանից հետո, որպես պարսիկների դաշնակից։

Ստրաբոնը, հետևելով Էրատոսթենեսին, հաղորդում է, որ մարդերը բնակվում էին Կասպից ծովի հարավ-արևելյան ափի երկայնքով՝ անարիակների և հիրկանացիների[13], ինչպես նաև Կասպից ծովից հարավ-արևմուտք՝ «Մեդական և Հայկական լեռների» լանջերին ապրող հայերի ու աղվանների հարևանությամբ[14]։

Այն, որ մարդերը եղել են Աքեմենյանների դաշնակից, անուղղակի հետևում է նաև Մեդիայի մասին եղած Ստրաբոնի մի հաղորդումից. «Նեարքո-

---

[6] Նույն տեղում, IV, 63; Strabo, The Geography, Cambridge, Mass.—London, 1954—1961, IX. 2. 31.

[7] Հետաքրքիր է այս անունների միահյուսումը Կտեսիասի կողմից հաղորդվող ավանդության հետ՝ Կյուրոսի ծագման մասին հովվուհուց և մարդ Ատրադատից (տե՛ս՝ И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 417, ծան. 3)։

[8] Herod., VII, 78 և 80; VIII, 130.

[9] Xenophon, Anabasis, Cambridge, Mass.—London, 1947, IV, 3, 4.

[10] Г. А. Тирацян, Некоторые аспекты внутренней организации Армянской сатрапии, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 2, էջ 109—115։

[11] J. Marqwart, Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation, Potsdam, 1919, էջ 24։

[12] М. А. Дандамаев, Иран при первых Ахеменидах, М., 1963, էջ 219, 224, 264—265։

[13] Strabo, XI, 6, 1.

[14] Նույն տեղում, XI., 7, 1։

սը ասում է, որ այնտեղ չորս ավազակային ցեղեր կային և դրանցից մարդերը հարևան էին պարսիկներին, ուքսիները (Οὐξίοι) և էլիմայացիները (Ἐλυμαῖοι)՝ մարդերին և սուսիացիներին (Σουσίοις). կոսայացիները (Κοσσαῖοι)՝ մեդացիներին։ Նրանք թագավորներին ստիպում էին հարկ վճարել։ ... Ալեքսանդրը, հարձակվելով ձմռանը, վերջ տվեց նրանց մեծ հանդգնությանը»[15]։ Նշված ցեղերը, ամենայն հավանականությամբ, դաշնակից էին Աքեմենյաններին։ Այսպես, օրինակ, նույն տեղում Ստրաբոնը նշում է, որ կոսայացիները թագավորներից նվերներ էին ստանում։ Սվ չնայած պարսիկների պարտությանը, նրանց դաշնակից ցեղերը, ըստ երևույթին, շարունակում էին պայքարը հունա-մակեդոնական նվաճողների դեմ։

Խոսելով Պարսքում ապրող կիրտիացիների (Κῦρτιοι) և մարդերի մասին, Ստրաբոնը նշում է, որ նրանք «նույնիսկ մինչև այժմ ապրում են Հայաստանում»[16]։ Այս հաղորդումից երևում է, որ մարդերը դրանից առաջ արդեն ապրել են Հայաստանում, հավանաբար Կորճայքին հարևան շրջանում։ Այս հաղորդմանը համահնչյուն են Պտղոմեոսի տվյալները. „Ἀπ' ἀνατολὴν δὲ τῶν τοῦ Τίγριδος ποταμοῦ πηγῶν ἡ τε Βαγραυδανηνὴ καὶ ὑπ' αὐτὴν ἡ Γορδυηνή (ἡ Γορδυνή), ἧς ἀνατολικωτέρα ἡ Κω[ρ]ταία καὶ ὑπ' αὐτὴν Μαρδοι"[17].

Ինչպես տեսնում ենք, Քսենոփոնի հիշատակությունը մարդերի մասին համապատասխանում է այլ անտիկ հեղինակների հաղորդումներին։ Դրանից հետևում է, որ Հայաստանում մարդերի բնակեցման նախնական տարածքը եղել է Վանա լճից հարավ։ Հետագայում հայկական աղբյուրներում այդ շրջանն անվանվել է «Բուն Մարդաստան» (Վասպուրականում)[18]։ Այս տարածքի մոտ Պտղոմեոսը Ասորեստանի բնակատեղիների ցուցակում հիշատակում է Մարդ[19].

Իրանական պետությունում մարդերի դերի մասին կարևոր տեղեկություն է հաղորդում Իսիդոր Քարակացին. «Առաջինը Հրահատ արքան էր, որ մարդերին բնակեցրեց Քարակում (Χαραξ)։ Այն գտնվում է Կասպիական կոչվող լեռան ստորոտում, որից և Կասպիական դռներ անունը»[20]։ Հրահատ I-ը (մ. թ. ա. 176—171 թթ.) մարտնչում էր Կասպիական (այժմ Էլբուրսի) լեռան բնիկների հետ, ըստ երևույթին, օգտվելով մարդերի աջակցությունից։ Դա պարթևների պետության ընդարձակման սկզբնական ժամանակաշրջանն էր։

Պլուտարքոսի հաղորդման համաձայն հռոմեական զորավար Լուկուլլոսը մ. թ. ա. 68 թ. զորքով արշավեց Արտաշատի վրա։ Նրա դեմ դուրս եկավ Տիգրան II-ը, որի զորքի առաջին շարքում էին մարդերի հեծյալ նետաձիգները և իբերական նիզակավորները, որոնց հետ, մնացած այլացեղ զինվոր-

---

15 Նույն տեղում, XI, 13, 6։

16 Նույն տեղում, XI, 13, 3։

17 Claudii Ptolemaei Geographia, ed. C. Mullerus, Parisiis, 1901, V, 12, 9.

18 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 45։ Վասպուրականում ապրող մարդերի մասին տե՛ս Վ. Վարդանյան, Մարդերը Վասպուրականում, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 3, էջ 49—60։

19 Claudii Ptolemaei Geographia, ed. C. Nobbe, Lipsiae, 1845, VI, 1, 3.

20 Isidori Characeni Mansiones Parthicae, VII (K. Muller, Geographi Graeci Minores, Hildesheim, 1965, t. I).

ների համեմատ, Տիգրան II-ը ավելի մեծ հույսեր էր կապում, որպես ամենից մարտունակների[21]։

Մ. թ. I դարում մարդերն արդեն կազմում էին Հայաստանի բնակչության մի մասը։ Ըստ Տակիտոսի հաղորդման, Արտաշատ—Տիգրանակերտ ճանապարհին Կորբուլոնը մարդերի սահմաններով անցնելիս (մ. թ. 59 թ.) ենթարկվում է հարձակումների։ Նրանց դեմ հանելով իբերներին, Կորբուլոնը ավերում է մարդերի երկիրը[22]։ Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ մարդերը փաստորեն իրենց բնակեցման տարածքն էին պաշտպանում։ Անհրաժեշտ է նշել, որ Մարդուցայքից մի քիչ արևմուտք գտնվում էր Ապահունիքը, որի անունը կապվում է իրանական «ապարհ» ցեղանվան հետ[23]։ Այդ ցեղի այս տեղերում հայտնվելը նույնպես արդասիք էր իրանական ցեղերի միգրացիայի։

Ն. Ադոնցի կարծիքով, Մարդաղի գավառի մարդերը ծագում են այդ ցեղի այն ներկայացուցիչներից, որոնց հիշատակում է Քսենոփոնը Կենտրիտես գետի ափին։ Շարժվելով հյուսիս նրանք զբաղեցրին մի տարածություն, որը հետագայում իրենց անունով կոչվեց Մարդաղի։ Իսկ Մարդաստանում (Մարդուցայք) մարդերը հայտնվել են Իրանի կողմից, ավելի ուշ, քան Բուն Մարդաստան և Մարդաղի գավառներում[24]։

Կարծում ենք, որ Ն. Ադոնցը, հնարավոր համարելով մարդերի ի հայտ գալը Մարդաստանում (Մարդուցայքում) ավելի ուշ ժամանակաշրջանում, դիտում է դա որպես Իրանից ծայր առած նոր միգրացիայի և ոչ թե Հայկական լեռնաշխարհում մինչ այդ բնակություն հաստատած մարդերի տեղաշարժերի արդյունք։

Հ. Մանանդյանը համամիտ է Մարկվարտի հետ այն բանում, որ մարդերի երկիրը (որի սահմաններով անցել էր Կորբուլոնը) գտնվել է Տարոնից հյուսիս-արևելք[25]։ Ապա նշում է. «Տակիտոսի մոտ հիշատակված մարդերի բնակության շրջանը պետք է որոնել Արածանիի հովտի լեռնային վերին շրջանում»[26]։

Եթե նկատի ունենանք, որ տվյալ հատվածում Կորբուլոնի անցած ճանապարհի մասին Տակիտոսի հաղորդածը վերաբերում է ոչ թե մարդերի զբաղեցրած բուն տարածքին, այլ սահմանամերձ շրջաններին, ապա պարզ կդառնա, որ, մի կողմից, Մարկվարտի, Հ. Մանանդյանի և, մյուս կողմից՝ Ն. Ադոնցի կարծիքները իրար չեն հակասում, քանի որ Տարոնից հյուսիս-արևելք ընկած Արածանիի հովտի լեռնային վերին շրջանը համապատասխանում է Ծաղկոտն, Կոգովիտ և Գառնի գավառների որոշ մասերին, որոնք և կազմում են Մարդուցայքի սահմանամերձ շրջանները։ Իսկ ինչ վերաբերում է մարդերի երկրի

---

21 Plutarch's Lives. Lucullus, XXXI. 5—6, Cambridge, Mass.—London, 1959.

22 Tacitus, The Annals, Cambridge, Mass.—London, 1956, XIV, 23.

23 Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 38։

24 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 417, ծան. 5։ Գուցե այս տեսանկյունից բացատրվի Խորենացու այն հաղորդումը, որ Հայոց Մարդպետի իշխանությունը տարածվում էր «Ատրպատականէ մինչև ցՃուաշ և զնախճաւան» («Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 112), որից, թերևս, երևում է մարդերի թափանցման ուղղությունը Իրանի կողմերից Մարդուցայք։

25 J. Marqwart, նշվ. աշխ., էջ 23։

26 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1945, էջ 337։ Տե՛ս նաև նույնի՝ Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները, Երևան, 1936, էջ 106—107։

ավերմանը, ապա այդ փաստը նույնպես չի հակասում Մարդուցայքի օդտին եղած կարծիքին, քանի որ Կորբուլոնը, չշեղվելով իր ուղուց, մարդերի դեմ ոտքի է հանում իբերներին։

Մարդերը Հայաստանում այնքան մերձեցան բնիկ բնակչությանը, որ սկիզբ դրին իշխանական տոհմի, «որի սերկայացուցիչը,— ինչպես նշում է Ն. Ադոնցը,— կրում էր մարդպետ անվանումը։ Հետագայում այդ անունը վերածվեց տոհմական տիտղոսի, ինչպես սաղխազ և ասպետ, և ինչպես վերջինների կրողները սկսեցին անվանվել Մաղխազունիներ, Ասպետունիներ, այնպես էլ մարդերի տոհմը և նրանց տիրույթները կոչվում էին Մարդպետական»[27]։

Այսպիսով, կարելի է ասել, որ Իրանական սարահարթի հարևան երկրներում առանձին առիթներով հայտնվելուց բացի, մարդերը, մյուս իրանական ցեղերի հետ, տեղաշարժվել են և նրանց մի մասը բնակություն էր հաստատել Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում, ընդգրկվելով հին հայկական հասարակության սոցիալական տրոհման պրոցեսի մեջ։ Հասարակական կյանքում մարդերի գրաված դիրքը նպաստեց նրանց վերնախավի հարստացմանը և ուժեղացմանը։ Դրանով իսկ մարդերի էթնո-սոցիալական խմբի հայացման ընթացքում հիմք է դրվում Մարդպետական նախարարական տոհմին։

Հայաստանում բնակություն հաստատած մարդերը ունեցել են զարգացման այսպիսի ուղի, անցնելով հին Հայաստանի ստրկատիրական և վաղ-ֆեոդալական հասարակության սոցիալ-դասակարգային զարգացման որոշակի փուլերը։ Մինչև Իրանում, նշված ժամանակաշրջանում, որքանով մեզ հայտնի է, նրանք դուրս չեկան ցեղային միության և ռազմական դեմոկրատիայի աստիճանից։

ПЛЕМЯ МАРДОВ В ДРЕВНЕЙ АРМЕНИИ

(V в. до н. э.—I в. н. э.)

Э. Л. ДАНИЕЛЯН

(Резюме)

В VII—V вв. до н. э. марды упоминаются среди племен, населявших Иранское нагорье, и вне этих пределов известны только во время военных походов как союзники персов. В числе других иранских племен марды мигрировали, часть из них осела в различных областях Армянского нагорья. Территория первоначального расселения мардов в пределах Армении находилась на юго-востоке от озера Ван и называлась в армянских источниках «Бун (Собственно) Мардастан».

---

27 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 417։ Մարդպետները գլխավորում էին թագավորական ամրությունների ու բերդերի պահպանությունը, արքունի գանձերի, կալվածների, հանդերձարանի հսկողությունը, ինչպես նաև վերահսկում էին թագավորների կանանոցը (տե՛ս «Փաստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, էջ 173։ Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 64)։ Մարդպետների տոհմը Արծրունիների հետ ունեցած հակամարտության հետևանքով ոչնչանում է, և V դարում այլևս գոյություն չուներ, իսկ հաղթողները նրանց տիրույթների հետ ժառանգում են նաև «Մարդպետ» տիտղոսը (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 320)։

Из сообщения Страбона о покорении Александром Македонским племен, живших по соседству с персами, можно заключить, что, несмотря на поражение персов, верные им племена продолжали оказывать сопротивление греко-македонским завоевателям. Как свидетельствует Исидор Харакский, при Фраате I (176—171 гг. до н. э.) на мардов в Парфии была возложена охрана горных проходов. Из сообщения Плутарха о походе Лукулла в 68 г. до н. э. следует, что мардийские лучники составляли боевое ядро армянской конницы, а из сведений, приводимых Тацитом в связи с походом Корбулона из Арташата в Тигранакерт (59 г. н. э.), можно заключить, что марды уже в I в. н. э. обитали на северо-востоке от озера Ван, в области, называемой Мардуцайк. Этноним «мард» сохранился также в названии области Мардали.

Марды были вовлечены в процесс социального расслоения древнеармянского общества. Положение, занимаемое мардами, способствовало обогащению их верхушки, ее включению в господствующий класс Армении. Не случайно, что этно-социальная группа мардов в процессе армянизации основала нахарарский дом Мардпетакан. Марды прошли определенные этапы социально-классового развития рабовладельческого и раннефеодального общества древней Армении, в то время как в Иране в тот же период, насколько нам известно, они не вышли из рамок племенного объединения и стадии военной демократии.